ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ НОР АРТАГЕРСА

05 դեկտեմբերի 2014 թվական

Թիվ- 110

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Նոր Արտագերսի գյուղապետարանը կից Ձեզ է ներկայացնում համայնքի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 8 նիստի որոշումները:

Առ դիր 10 թերթ:

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Լ. Վասիլյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.30/14202-14
11 12 2014 թ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 01
թիվ- 8 նիստի որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:

Զեկ.՝ Լ. Վասիլյան / աշխատակազմի քարտուղար /

2. Գյուղապետարանի աշատակազմի և բյուջետային հիմնարկների 2015 թ. հաստիքներն ու դրույքաչափերը:

Զեկ.՝ Ս. Հակոբյան /համայնքի ղեկավար /

3 Համայնքի վարչական տարածքում 2015 թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում :

Զեկ.՝ Ս. Հակոբյան /համայնքի ղեկավար /

4 Բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Զեկ.՝ Ն. Հակոբյան / գլխավոր մասնագետ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

01 դեկտեմբերի 2014 թվական N –1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 8 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Վ. Վարդանյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

2015 Թ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ 2014թ.
1	Համայնքի ղեկավար	1	200000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	140000
	Ընդամենը		340000
	Աշխատակազմ		
3	Աշխատակազմի քարտուղար	1	138000
4	Գլխավոր մասնագետ	1	132000
5	Առաջատար մասնագետ	1	100000
6	I կարգի մասնագետ	1	95000
	Ընդամենը		465000
	Տեխնիկական սպասարկման անձնակազմ		
7	Գործավար	1	70822
8	Համակարգչային օպերատոր	1	70822
9	Վարորդ	1	80000
10	Հավաքարար	1	70822
	Ընդամենը	10	292466
	Ընդամենը		1097466

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

2015 Թ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 2 (երկու)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ 2014թ.
1	Գրադարանավար	1	70822
2	Կուլտուրայի տան շենքի պահակ	1	66139
	ԸՆԴԱՄԵՆԸ	2	136961

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

2015 Թ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4 (չորս)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ 2014թ.
1	Խմելաջրի գումար գանձող	1	70822
2	Փականագործ	1	66139
3	Կարկտակայանի հսկիչ	1	66139
4	Տեխնիկական սպասարկող	1	70822
	ԸՆԴԱՄԵՆԸ	4	273922

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

1-ը դեկտեմբերի, 2014 թվական N –3 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, և 10-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ մասով

ՈՐՈՇՈՒՄ է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի վարչական տարածքում 2015թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Վ. Վարդանյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ՝ Ս. Հակոբյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
2014 թ. դեկտեմբերի 1 -ի թիվ 8 նիստի
N 3-Ն որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինությունների (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ) 501- ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

ոչ հիմնական շինություններների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն մասով.

գ) նախատեսվում միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման

1) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝6000 դրամ.

2) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 7000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույտվության համա տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հաղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հաղուկացված գազերի վաճառքի թույտվության համա տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ:

5[1] Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:

6 Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ճամերը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ.

7 .Յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույտվության համա մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվու է՝ 5000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

Տեղական վճարների դրույքաչափեր՝

1.համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:

2. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000 դրամ:

3. համայնքի տարածքում մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 10.000 դրամ:

4. համայնքային ենթակայության (մանկապարտեզ) համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար ծնողական վճար սահմանել ամիսը 3000 դրամ:

5. համայնքային ենթակայության (երաժշտական դպրոց) համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար ամսական վճար սահմանել ամիսը 2500 դրամ:

6. խմելաջրի մատակարարման դրույքաչափը մեկ ընտանիքի համար սահմանել ամսական 1000 դրամ, սահմանել առտոնություն համայնքում բնակվող սոց. անապահով ընտանիքների համար սահմանել 500 դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ

2014 թվականի հաստատված բյուջեի եկամուտներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1257 հոդվածը ավելացնել 140.4 հազար դրամ (սուբվենցիաներ):

2014 թվականի հաստատված բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 1 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4221 հոդվածը պակասեցնել 200.0 հազար դրամ:
2. 1 բաժնի 3-րդխմբի 3-րդ դասի 4232 հոդվածը պակասեցնել 256.0 հազար դրամ:
3. 8 բաժնի 2-րդխմբի 1-ին դասի 4111 հոդվածը պակասեցնել 289.6 հազար դրամ:
4. 1 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածը ավելացնել 112.3 հազար դրամ:
5. 1 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4112 հոդվածը ավելացնել 104.3 հազար դրամ:
6. 1 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4269 հոդվածը ավելացնել 200.0 հազար դրամ:
7. 5 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածը ավելացնել 28.1 հազար դրամ:
8. 8 բաժնի 2-րդխմբի 4-րդ դասի 4269 հոդվածը ավելացնել 176.6 հազար դրամ
9. 09 բաժնի 8-րդ խմբի 1-ին դասի 4637 հոդվածը ավելացնել 264.7 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

01-ը դեկտեմբերի 2014թվական N 2-Ն

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2015Թ, ՀԱՍՏԻՔՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի երրորդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի գյուղապետարանի աշատակազմի և բյուջետային հիմնարկների 2015 թ. հաստիքներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներերդ օրը:

Ավագանիներ՝
1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Վ. Վարդանյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

01-ը դեկտեմբերի 2014թվական N4- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 2Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի երրորդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու դեկտեմբերի 6-ի (բյուջեն հաստատելու մասին) թիվ 2 Ն որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներերդ օրը:

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Վ. Վարդանյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ